ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-260

ԵՎԳԵՆՅԱ ԳՅՈՒԶԱԼՅԱՆ. ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվգենյա Գյուզալյանը ծնվել է 1903 թ. Թիֆլիսում՝ մտավորականներ Տիգրան Գյուզալյանի և Երանյակ Վարդանյանի ընտանիքում: Նա ընտանիքի կրտսեր՝ չորրորդ, երեխան էր: Ավարտելով Թիֆլիսի Գայանյան իգական դպրոցը՝ Եվգենյան՝ Ժենյան, ընդունվում է Լենինգրադի պատմալեզվաբանական պետական ինստիտուտ: 1930 թ. ամռանը իր ուսումնական պրակտիկան Եվ. Գյուզալյանը անցնում է Հայաստանի Կուլտուր-պատմական թանգարանում, այժմ՝ Հայաստանի պատմության թանգարան:

Ստեփան Լիսիցյանի գլխավորած ազգագրության բաժինն ուներ մասնագիտական ու պրոֆեսիոնալ կադրերի խիստ պակաս և կազմակերպչական առումով կայացման ընթացքում էր: Ստ. Լիսիցյանը դիմում է Լենինգրադի պատմալեզվաբանական ինստիտուտի ղեկավարությանը և Մոսկվա՝ Լուսժողկոմի կադրերի բաժնին Եվգենյա Տիգրանի Գյուզալյանին Հայաստանի Կուլտուր-պատմական թանգարանի ազգագրության բաժնում աշխատանքի նշանակելու խնդրանքով: 1931 թ. հուլիսից մինչև իր ձերբակալումը՝ 1939 թ., Եվ. Գյուզալյանը աշխատում է Հայաստանի պատմության թանգարանում՝ որպես ավագ գիտաշխատող: Օժտված լինելով աշխատասիրությամբ, մասնագիտական մեծ ընդունակություններով և կամքի ուժով՝ Գյուզալյանը վարում է բաժնի հաշվառման մատյանները, որոնցում նա ջանասիրաբար գրանցել է 3300 միավոր առարկա (կազմել է դրանց անձնագրերը), գեղարվեստական նկար, լուսանկար:

1931–1938 թթ. ընթացքում Ստ. Լիսիցյանի գլխավորությամբ կազմակերպվում են վեց գիտական արշավախմբեր դեպի Սյունիք (Գորիսի, Սիսիանի, Կապանի, Մեղրու շրջաններ), Լոռի (Դսեղ, Մարց, Լոռուտ, Հաղպատ, Դեբետ, Շահնազար և այլ գյուղեր), Ախալցխա-Ջավախք, Սևանի ավազան (Նոր Բայազետի, Մարտունու, Վարդենիսի շրջաններ), որոնց ակտիվ մասնակցություն է ունենում Ժենյա Գյուզալյանը: Այդ հավաքչական-կազմակերպչական աշխատանքներին Եվ. Գյուզալյանի կարևոր մասնակցության մասին վկայում են մի շարք փաստաթղթեր՝ Գորիսի շրջգործկոմի նախագահ Ա. Հովհաննեսյանի 17. 09. 1931 թ. գյուղխորհուրդներին ուղղված գրությունը, Սյունիքից՝ 250, Լոռուց՝ 267 և Շահնազար գյուղից՝ 32, Ախալցխա-Ջավախքից՝ 250 տարբեր բնույթի առարկաների գրանցումները, դաշտային տետրերը: Նրա զարմուհի Մերի Ղազարյանը իր անձնական արխիվից ՀՊԹ-ին նվիրել է ինը տետր՝ «Ջանգեզուրցի կնոջ զգեստի նկարագիր», «Մեղրեցոց տարազ», «Ագուլեցոց զգեստ», «Շատախի տարազ», «Թիմարցի կնոջ տարազ», «Ախալցխացի կնոջ զգեստ», «Պարսկահայ կնոջ տարազ», «Տրապիզոնցի հայ կանանց զգեստ», «Ուտիացիների զգեստ», որտեղ Ժենյա Գյուզալ-

յանը, իրեն հատուկ բարեխղճությամբ, նշել է տեղեկությունները հաղորդողների անունները: Տեքստերն ուղեկցվում են թանաքով կատարված մանրակրկիտ գծանկարներով: Ուշագրավ են ժամանակի ազդեցությունից մգացած թերթերի վրայի գրառումները՝ Սյունիքում և Լոռիում որդեծնության, ամուսնական ու թաղման ծեսերի և ժողովրդական հավատալիքների մասին:

Գիտարշավներից հավաքած ազգագրական նյութերի մշակումից և թանգարանային ընթացիկ աշխատանքներից բացի 1933–1934 թթ., 1936 թ. Եվ. Գյուզալյանը և Ստ. Լիսիցյանը միասին մշակում են ազգագրական թեմատիկ ցուցադրությունների պլանները: Ընտանեկան կյանքի ու զբաղմունքների, ավանդական հագուստի, ժողովրդական արհեստների թեմատիկ բաժինները հանձնարարված էին Եվ. Գյուզալյանին: Սակայն իր մասնակցությամբ ցուցահանդեսներից լավագույնը 1939 թ. Հայաստանի պատմության թանգարանում «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսն էր: Կարո Ղաֆադարյանի գնահատմամբ՝ ժողովրդական հանդիսությունների ֆոնին, այս ցուցահանդեսը մասշտաբային առումով առաջինն էր Հայաստանում: Ցավոք, աշխատանքի բարձր գնահատականին անմիջապես հետևում է Եվ. Գյուզալյանի ձերբակալությունը: Եվգենյա Տիգրանի Գյուզալյանին ձերբակալել են 1939 թ. սեպտեմբերի 15-ին Երևանում, քրոջ՝ Նազիկ Ղազարյանի տանը: Մեղադրանքը՝ Կուսակցության և Կառավարության առանձին միջոցառումների դեմ ուղղված հակասովետական, թշնամական, հակահեղափոխական զրույցներն էին: Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով Դատական կոլեգիայի 67 հոդվածի 1 մասով (հակասովետական պրոպագանդա) Եվ. Գյուզալյանին դատապարտել են 10 տարվա ազատազրկման և 5 տարվա իրավազրկման: 1941 թ. աշնանը Կարագանդայի ճամբարում Եվ. Գյուզալյանը ողբերգաբար կնքում է իր մահկանացուն:

Լիլիա Ավանեսյան
Հայաստանի պատմության թանգարան
պատմական գիտությունների թեկնածու